



2022 թ. սեպտեմբերի 25 ՏԻՄ ընտրություններ

Ամփոփ դիտարկումներ

ըստ համայնքների

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինք

Ներածություն.....	3
Արագածոտն	5
Ալագյազ.....	5
Թալին	6
Ծաղկահովիտ	8
Գեղարքունիք	10
Ճամբարակ.....	10
Լոռի	11
Ալավերդի	11
Գյուլագարակ.....	13
Լոռի Բերդ.....	14
Տաշիր	15
Կոտայք	16
Ակունք	16
Չարենցավան	18
Շիրակ.....	20
Անի	20
Սյունիք	22
Սիսիան	22
Քաջարան	24
Վայոց Ձոր	25
Արենի.....	25
Եղեգիս	26
Տավուշ.....	27
Բերդ.....	27
Վերջաբան	29

Ներածություն

2022թ. սեպտեմբերի 25-ի ընտրությունների նախընտրական փուլի վրա բոլոր համայնքներում բեկումնային ազդեցություն ունեցավ սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական ագրեսիան: Այդ օրերին մրցակցող ուժերը հայտարարությունների միջոցով կամ ուղղակի դադարեցրին նախապես պլանավորած քարոզչական գործողությունները, իսկ դրանից հետո արդեն փոխեցին քարոզչության տրամաբանությունը՝ կենտրոնացնելով այն ագրեսիայի հետևանքների շուրջ՝ այցելելով առաջնագիծ կամ տեղահանված ընտանիքներին, հավաքագրելով տարբեր միջոցներ և այլն: Նախընտրական հավաքների փոխարեն՝ թեկնածուները մասնակցում էին հուղարկավորությունների կամ ավելի փակ ձևաչափով շփումների:

Երկարաժամկետ դիտորդության արդյունքները ամփոփվել էին մինչև քվեարկությունը՝ ուրվագծելով քարոզչության հիմնական ուղղությունները, ընդհանրական տվյալներով ներկայացնելով խախտումները և չարաշահումները:¹ Այս տեղեկանքում փորձ է արվում դիտարկել համայնքներում ընտրությունները որպես առանձին ուսումնասիրության առարկա՝ ներկայացնելով նախընտրական փուլում տեղի ունեցողը, քվեարկության օրը և արդյունքները:

Այս ՏԻՄ ընտրությունների ժամանակ 15 համայնքում առաջադրվել են գործող համայնքապետերը (Ալավերդի, դեպքում՝ Ախթալայի համայնքապետը), իսկ 3-ում համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարները: Բոլոր համայնքներում քվեարկության արդյունքներով առաջատար են եղել հենց գործող ղեկավարները՝ անկախ քաղաքական պատկանելությունից: Վերջին ՏԻՄ ընտրությունները ևս ապացուցում են, որ ըստ էության՝ համայնքներում իշխանությունը փոխվում է միայն այն դեպքում, երբ գործող համայնքապետը թեկնածություն չի առաջադրում: Ընդ որում՝ այստեղ ակնհայտ է համայնքային և մարզային իշխանությունների կողմից վարչական ռեսուրսների քողարկված և բացահայտ չարաշահման դեպքերի առատությունը և քարոզարշավի փուլում ընտրազանգված ապահովելուն ուղղված այն նույն գործելաոճը, որը հաճախ մինևույն դերակատարները կիրառում էին մինչև 2018թ.-ը՝ տեղական և հանրապետական մակարդակի ընտրություններում պատվիրատու կուսակցությունների հաղթանակն ապահովելու համար:

Ստորև ներկայացված են այդ համայնքապետերի և նրանց առաջադրող ուժերի վերաբերյալ ամփոփ տվյալներ: Ալավերդի, Բյուրեղավան, Անի և Սիսիան համայնքներում նշված ուժերը, թեև քվեարկության արդյունքում ստացել են առավել շատ կողմ ձայներ, սակայն ոչ՝ մանդատների 50% և ավելին: Ըստ այդմ՝ այս համայնքներում համայնքի ղեկավարը կընտրվի ավագանու կողմից:

¹ «Անկախ դիտորդ». 2022թ. սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունների երկարաժամկետ դիտարկման միջանկյալ զեկույց, <https://hcav.am/lto-midterm-report-september-25/>

ՄԱՐԶ	ՀԱՄԱՅՆՔ	ԱԶԳԱՆՈՒՄ, ԱՆՈՒՄ, ՀԱՅՐԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐՈՒՄ	ՊԱՇՏՈՆԸ	ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ
ԱՐԱԳԱԾՈՏՆ	ԱԼԱԳՅԱԶ	ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՍՄ ՀԱՍԱՆԻ	ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՈՒՄ	ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2017
ԱՐԱԳԱԾՈՏՆ	ԹԱԼԻՆ	ՍԱՓԵՅԱՆ ՏԱՎՐՈՍ ԷԴԻԿԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ Ժ/Պ	2021
ԱՐԱԳԱԾՈՏՆ	ԾԱՂԿԱՅՈՎԻՏ	ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱԻՆ ՄԽԻԹԱՐԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ԾԱՂԿԱՅՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2002
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ՃԱՄԲԱՐԱԿ	ԱՂԱՅԱՆ ՎԱԶԵՆ ԱՐԱՐԱՏԻ	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2017
ԼՈՌԻ	ԱԼԱՎԵՐԴԻ	ԹԱՄԱՅՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍԱՄՎԵԼԻ	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2012Թ. ՃՈՃԿԱՆԻ, 2017-ԻՑ ԱԽԹԱԼԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2012
ԼՈՌԻ	ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ	ՎԱՐԴԱՆՅԱՆ ԽԱՋԻԿ ՌՈԲԵՐՏԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ Ժ/Պ	2021
ԼՈՌԻ	ԼՈՌԻ ԲԵՐԴ	ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ ՄԵԼԺԻԿԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1996 ԿՈՂԵՍԻ, 2017-ԻՑ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	1996
ԼՈՌԻ	ՏԱՇԻՐ	ԱՐԵԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ ԷԴԻԿԻ	«ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2012
ԿՈՏԱՅՔ	ԱԿՈՒՆՔ	ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ ՊԱՏՎԱԿԱՆԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	1996
ԿՈՏԱՅՔ	ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ	ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ ՍՈՒՐԵՆԻ	«ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ	ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2008
ԿՈՏԱՅՔ	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ	ՇԱՀԱԼԴՅԱՆ ՀԱԿՈԲ ԿԱՎԱԼԵՆԿՈՅԻ	«ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2007
ԿՈՏԱՅՔ	ՋՐՎԵԺ	ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՎԻԳԵՆԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	1991
ՇԻՐԱԿ	ԱՆԻ	ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ ՍԱՄՎԵԼԻ	«ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	2004Թ. ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ, 2017 Թ. ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2004
ՍՅՈՒՆԻՔ	ՄԻՍԻԱՆ	ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ ԲԵՆՅԱՄԻՆԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ Ժ/Պ	2021
ՍՅՈՒՆԻՔ	ՔԱՋԱՐԱՆ	ՓԱՐԱՄԱՅՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՎՐԵԺԻԿԻ	«ԴԵՊԻ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ	2016Թ. ՊԱՇՏՈՆԱՎԱՐԵԼ Է ՈՐՊԵՍ ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ, 2017Թ. ԸՆՏՐՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2016
ՎԱՅՈՑ ՋՈՐ	ԱՐԵՆԻ	ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ ՕՆԻԿԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2007Թ. ՌԻՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ, 2017Թ. ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2007
ՎԱՅՈՑ ՋՈՐ	ԵՂԵԳԻՍ	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԿԱՄՈՅԻ	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2008Թ. ՔԱՐԱԳԼՈՒԽԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ, 2017Թ. ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2008
ՏԱՎՈՒՇ	ԲԵՐԴ	ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՆԻ	«ՉՈՐԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ	2012

Արագածոտն

Ալազյազ

N	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐԻ ԹԻՎԸ
1	ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՍՄ ՀԱՍԱՆԻ	773
2	ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՆՁՈՐ ՄԻՐԱԶՄԻ	444

Ալազյազը 18 համայնքներից միակն էր, որտեղ ընտրություններն անցկացվում էին մեծամասնական ընտրակարգով: Համայնքապետ ընտրվելու համար մրցապայքարի մեջ էին գործող ղեկավար Ջասմ Հասանի Մախմուդովը (անկուսակցական) և «Քաղաքացիական պայմանագիր» կողմից առաջադրված Անգոր Միրազմի Ուռուսյանը: Վերջինս աշխատում է Հայփոստում՝ որպես օպերատոր:

Քարոզարշավն այս, ինչպես նաև ծաղկահովիտ համայնքում, սկսվել է մի քանի օր ուշացումով: Ըստ նախնական տեղեկությունների՝ թեկնածուներից Ջասմ Մախմուդովը շատ ավելի վաղ է պատրաստվել այս գործընթացներին: Նրան և կողմնակիցներին հաջողվել է համայնքների խոշորացման գործընթացի ժամանակ Ալազյազի գլխավորությամբ կենտրոնացնել հիմնականում եզդիական գյուղերը:

Նախընտրական քարոզչության ամբողջ ընթացքում առաքելության երկարաժամկետ դիտորդները կողմերից ահազանգեր են ստացել վարչական ռեսուրսի կիրառման, չսահմանված վայրերում քարոզչական պաստառներ, նյութեր փակցնելու, մեկ դեպքում՝ Ջասմ Հասանի Մախմուդովի աջակիցների կողմից ընտրակաշառք բաժանելու (չի ապացուցվել) և այլ դեպքերով: Հատկանշական է այն հանգամանքը, որ գործող համայնքապետի որդիները, ազգականները զբաղեցնում են տարբեր պաշտոններ (դպրոցի գործող տնօրեն, վարչական շրջաններում տարբեր պաշտոններ, ՊԵԿ-ում պաշտոնյա որդի և այլն) և այդ ռեսուրսը լայնորեն կիրառվել է այս ընտրություններին: Տարբեր ձևաչափերով վարչական ռեսուրս կիրառելուց կամ կիրառելու փորձ կատարելուց անմասն չեն մնացել մարզային իշխանությունները, որոնք աջակցում էին Ուռուսյան Անգորին:

Ամեն դեպքում նախընտրական մթնոլորտը չի անցել թույլատրելի սահմանը՝ չնայած սպառնալիքների մասին որոշ լուրերին: Թե համայնքի ղեկավարի թեկնածուները, թե ավագանու անդամի թեկնածուներն առանձնապես տեղեկացված չէին ԸՕ կարգավորումներից:

Հայտնի է դարձել, որ Ռյա Թագա համայնքի մի տարեց բնակիչ դիմել է համայնքապետարան, իսկ ապա համայնքապետի նախընտրական շտաբ՝ անշարժ գույքի սեփականության իրավունքը հաստատելու հարցով, սակայն նրան պատասխանել էին, որ խնդրի լուծման համար դիմի համայնքի ղեկավարի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուին, ում, ենթադրաբար, պատրաստվում է ընտրել: Սեպտեմբերի 23-ի երեկոյան Ալազյազ համայնքի Ռյա Թագա բնակավայր էին այցելել թեկնածու Ջասմ Մախմուդովի որդի դատավոր Ռուստամ Մախմուդյանը և Ապարան համայնքի ղեկավար Կարեն Եղիազարյանը: Այցելության նպատակը Ջասմ Մախմուդովի շտաբի ներկայացուցիչների վատ վերաբերմունքի համար ներողություն խնդրելը, խնդրին արագ լուծում տալ խոստանալը և Ջասմ Մախմուդովի օգտին քվեարկելու մասին ակնարկ անելն է եղել, ինչի մասին դաշինքին և ահազանգով ժամանած ոստիկանության ծառայողներին հայտնել էր նույն բնակիչ որդին:

Չնայած քվեարկության օրը Ալազյազում հանդարտ է անցել՝ ընտրություններն աչքի էին ընկել չափազանց մեծ թվով օգնողների առկայությամբ, ընդ որում՝ օգնության էին դիմում հիմնականում երկու կատեգորիայի ընտրողները՝ տարեցները և երիտասարդ կանայք:

Ալազյազում հաղթել է գործող համայնքապետ Ջասմ Մախմուդովը: Ավագանու 14 անդամներից ընտրվել է 9-ը, այդ թվում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից առաջադրված 4 թեկնածուներից 2-ը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ ինքնառաջադրված 1 թեկնածու: Որևէ այլ կուսակցություն կամ կուսակցության ներկայացուցիչ այս ընտրություններին չի մասնակցել:

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	Թեկնածուների թիվը Նախնական ցուցակում	Ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
2	«ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	35	3	2
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	81	0	16
14	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	60	6	5
18	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	39	4	2
24	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32	14	2

Թալին համայնքում 2021թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ընտրություններից հետո առաջացած ճգնաժամը² հանգուցալուծվեց համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցմամբ և արտահերթ ընտրությունների նշանակմամբ: Ընտրությունների նշանակումից հետո մի քանի բնակավայր ևս միացվեց Թալին խոշորացված համայնքին, ուստի՝ ընտրությունները կազմակերպվեցին կրկին սեպտեմբերի 25-ին, սակայն արդեն որպես նոր ձևավորված համայնքի հերթական ընտրություններ:

Թալինում ընտրապայքարի մեջ էին մտել «Կայունություն», «Արդար Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները: Մինչ քարոզարշավը սկսվելն այս համայնքը լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էր: Աչքի էին ընկնում հատկապես ընդդիմադիր լրատվամիջոցները, որոնք փորձում էին բոլոր մեթոդներով թեժացնել ընտրապայքարը: Չնայած կանխատեսումներին՝ ընտրապայքարը թեժ չանցավ, թերևս նաև այն պատճառով, որ 2021թ. դեկտեմբերի 5-ին Թալին համայնքում կայացած ընտրությունների մասնակից ուժերից միայն «Քաղաքացիական պայմանագիր» էր կրկին մասնակցում ընտրություններին՝ առաջադրելով միևնույն թեկնածուին: Նախորդ ընտրությունների արդյունքում ընդդեմ «Քաղաքացիական պայմանագրի» կռիվից ձևավորած ուժերը չէին մասնակցում ընտրություններին կամ հանդես էին գալիս համայնքի ղեկավարի այլ թեկնածուներով:

«Արդար Հայաստանը», որի առաջին համարը նախորդ ընտրություններին մասնակցում էր «Չարթունք ազգային քրիստոնեական» կուսակցության կազմում՝ 5-րդ տեղով, չէր հանրայնացնում ոչ գործիքակազմը, ոչ ընտրողների հետ հանդիպելու ուղղությունները: Որոշ չափով քարոզարշավին մասնակցեց «Ապրելու երկիրը», իսկ «Կայունություն» կուսակցությունը բավականին ուշացումով բացեց նախընտրական շտաբ՝ այդպես էլ չմասնակցելով քարոզարշավին: «Հայ յեղափոխական դաշնակցությունը» ևս ակտիվ քարոզարշավ չէր իրականացնում:

Քվեարկության օրվա ուշագրավ դեպքերից է, որ Թալին համայնքի Արտենի բնակավայրում կուտակումը ձևավորվել էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուներից մեկի շուրջ՝ բնակավայրի վարչական ղեկավարի և վստահված անձանց մասնակցությամբ: Միաժամանակ մի շարք այլ բնակավայրերում կուտակումներին և վստահված անձանց ուղղորդման փորձերին չէին մասնակցում թեկնածուները. դիտորդների տեղեկություններով իրենք այցելում էին տեղամասեր և որոշ ժամանակ անհարկի շարունակում մնալ տեղում: Նկատելի խնդիր էր ընտրողներին օգնության դեպքերի մեծ քանակը, որոնք, ըստ դիտորդների, չէին բխում կարիքից, այլ զուտ ուղղորդում էին: Նկատվել են նաև առաջին անգամ ընտրություններին մասնակցող երիտասարդներին օգնելու դեպքեր, որոնք հիմնավորվում էին «կարդալ չիմանալով», արհամարհելով այն փաստը, որ քվեաթերթիկների վրա մեծ տառաչափով տեղադրված են համապատասխան կուսակցության/դաշինքի համարները:

Թալինում ընտրություններին մասնակցած բոլոր 5 ուժերը հաղթահարել են անցողիկ շեմը: Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Տավրոս Սափեյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 16 մանդատ, ինչի արդյունքում Սափեյանն օրենքի ուժով ընտրվել է համայնքի ղեկավարի

² Թալինի «համայնքապետին» շանտաժն էլ չօգնեց. կլինեն նոր ընտրություններ, https://epress.am/2022/05/13/tavros_talin.html

պաշտոնում: «Արդար Հայաստան» կուսակցությունը ստացել է 5 մանդատ, իսկ «Կայունություն», «Ապրելու երկիր», «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները՝ 2-ական մանդատ:

Ծաղկահովիտ

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	44	0	8
8	«ՀՉՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	18	0	4
12	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	10	2	1
23	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16	0	2

Ծաղկահովիտ համայնքում ընտրապայքարի մեջ էին մտել «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն», «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները և «Հզոր համայնք» դաշինքը:

Առաջադրված «Նժդեհյան ցեղակրոն կուսակցության» գրանցումը մերժվել էր՝ փաստաթղթերի թերի լինելու պատճառով: Քարոզչության ընթացքում բավականին տարօրինակ, երբեմն նաև ագրեսիվ վարքով աչքի է ընկել այս ուժի առաջին համարի թեկնածու Արայիկ Խանդոյանը:

«Հզոր համայնք» դաշինքի առանցքում ԲՀԿ կուսակցությունն էր, իսկ առաջին համարի թեկնածուն՝ նախկինում Հանրապետական կուսակցության անունից հանդես եկող և գործող համայնքապետի հիմնական մրցակից Գոռ Հունանյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջին համարի թեկնածուն՝ Ծաղկահովիտի գործող համայնքապետն էր (նախկինում՝ «Հայ յեղափոխական դաշնակցության» ներկայացուցիչ) և վայելում էր իշխող կուսակցության, մարզպետի ուղիղ աջակցությունը, այդ թվում՝ վարչական ռեսուրսների կիրառմամբ:

Չնայած «Լուսավոր Հայաստան» և «Հանրապետություն» կուսակցությունների առաջատար թեկնածուները փորձում էին ապահովել մրցակցային գործընթաց, հանդես գալով ընդդեմ «Քաղաքացիական պայմանագրի», համայնքի բնակիչների մոտ տարածված էր ընկալում, որ այդ հակադրությունն իրական չէ:

Այս համայնքում քարոզարշավը մեկնարկել է նախատեսված օրից բավականին ուշ: Ակտիվ քարոզարշավ հիմնականում կիրառել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Մյուս քաղաքական ուժերը բավարարվել են անհատական հանդիպումներով և քարոզչական նյութեր տարածելով: Այս համայնքում բավականին շատ էին տարածված քարոզչական պաստառների մասով խախտումները: Մարզպետի, մարզպետարանի մի շարք աշխատողների կողմից աշխատանքային ժամերին քարոզչության մեջ ներառվելը, ուսումնական հաստատություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությամբ զբաղվելը վարչական ռեսուրսի կիրառման դիտարկված օրինակներ են:

Դիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ թեկնածուները հիմնականում տեղեկացված չեն եղել նախընտրական հիմնադրամների գոյության մասին: Ավելին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պարագայում պնդել են, որ շտաբների տարածքները տրամադրվել են անհատույց, իսկ ծախսերն «իրենց գրպանից են անում»: Սակայն այլ հարցերին պատասխանելու ընթացքում հակասություններն ակնհայտ են դարձնում այդ տարածքները վարձակալման հիմքուներով և առանց հայտարարագրելու օգտագործելը:

Քվեարկության օրը գրեթե բոլոր համայնքներում սկստվող և օրինաչափ համարվող կուտակումներից և վստահված անձանց ներկայությունից բացի՝ Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ, Գեղադիր և Ծաղկահովիտ բնակավայրերում սկստվում էր ընտրողների կազմակերպված տեղափոխությունը միևնույն մասնավոր ավտոմեքենաների միջոցով: Ծաղկահովիտ բնակավայրում նույն «Լեքսուս» մակնիշի մեքենայի վարորդը մի քանի անգամ ընտրողների տեղափոխելուց հետո հյուրասիրություն էր կազմակերպել հանձնաժողովի անդամների համար: Գեղադիրում այդ աշխատանքներին լծված էր նաև վարչական ղեկավարը, որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձն էր:

Միևնույն ժամանակ գրեթե բոլոր տեղամասերում միևնույն ուժի՝ միաժամանակ երկու, երբեմն երեք վստահված անձանց ներկայությունը հանձնաժողովներն արդարացնում էին ընթացակարգերի «փոփոխությունները չիմանալով»:

Ծաղկահովիտ համայնքում մանդատների բաշխմանը մասնակցել են բոլոր ուժերը: «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 8 մանդատ և նրա ցուցակը գլխավորող համայնքի ղեկավար Նորահն Զակոբյանը վերընտրվել է պաշտոնում: «Հզոր համայնք» դաշինքը ստացել է 4 մանդատ: «Հանրապետություն» կուսակցությունը՝ 2 մանդատ: Համայնքի ղեկավարի տեղակալի գլխավորած ընտրական ցուցակով «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ստացել է 1 մանդատ:

Գեղարքունիք

Ճամբարակ

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	Թեկնածուների թիվը նախնական ցուցակում	Ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
9	«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	44	14	21

Ճամբարակ համայնքում առաքելությունը երկարաժամկետ դիտորդություն չի իրականացրել: Հաշվի է առնվել հատկապես այն հանգամանքը, որ այս համայնքում առաջադրվել էր միայն մեկ ուժ՝ գործող համայնքապետի գլխավորությամբ:

Քվեարկության օրը Ճամբարակի Արտանիշ բնակավայրում, չնայած ընտրությունների ոչ մրցակցային բնույթին, հանձնաժողովի անդամը թեկնածու կուսակցության և «Դեմ եմ» քվեաթերթիկները տրամադրելիս ոչ բացահայտ ուղղորդում էր ընտրողներին՝ ընդհուպ մինչև «Դեմոկրատական այլընտրանք» քվեաթերթիկը ծրարի մեջ դրված տրամադրելը: Հանձնաժողովների անդամները նույնպես բարձրաձայնում էին վերապատրաստման բացակայության և փոփոխությունները չիմանալու խնդրի մասին:

Ճամբարակ համայնքում առաջադրված «Դեմոկրատական այլընտրանք» ընտրվել է 97.88 % աջակցությամբ: Գործող համայնքապետ Վազգեն Ադամյանը վերընտրվել է պաշտոնում:

Ալավերդի

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկյն երի թիվը 03.10.2022 դրույթամբ	ստացած մանդատներ ի թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	81	1	13
18	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	40	0	13
20	«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	22	1	1
24	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16	0	0

Ալավերդի համայնքում պայքարի մեջ էին մտել «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր», «Հայ ազգային կոնգրես» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները: Ֆավորիտ ուժերը երկուսն էին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որի ցուցակը գլխավորում էր պատգամավոր Արեն Մկրտչյանը և «Ապրելու երկիր» կուսակցությունը, որի առաջին համարն էր Ախթալա համայնքի համայնքապետ (մինչ այդ՝ ճոճկանի համայնքապետ) Արկադի Թամազյանը: Քաղաքական իրավիճակը սուր դրսևորումներ չի ունեցել: Ալավերդու գործող համայնքապետ Սասուն Խեչումյանը չի առաջադրվել և ըստ Եուրոյան եղել է բավականին չեզոք: Հետաքրքրական է, որ մինչ ընտրական ցուցակը գլխավորելը, Արեն Մկրտչյանը հրապարակայնորեն կարծում էր, որ համայնքի ղեկավար պետք է լինի Արկադի Թամազյանի նման բանիմաց անձը: Այս իրավիճակը փոխվեց դիրքերը հստակեցնելուց հետո:

Քարոզարշավի ընթացքում երբեմն տեղ են գտել «Նեղ-տեղային հայրենասիրական» դրսևորումներ՝ «Ալավերդցուն թողած, հո՞ ճոճկանցուն չեք ընտրի», սակայն դրանք համատարած բնույթ չեն կրել: Քարոզարշավն ընդհանուր առմամբ անցել է հանգիստ և մրցակցային պայմաններում, չնայած որ նկատվել են խախտումներով քարոզչանյութերի փակցման և հակառակորդ ուժի քարոզչանյութերի վնասման դեպքեր:

Երկու հիմնական ուժերի կողմից նկատվել է միտում սուբվենցիոն ծրագրերը և ընդհանրապես համայնքում տեղի ունեցածը ներկայացնել որպես սեփական թիմի ձեռքբերում: Վարչական ռեսուրսի կիրառումը, նաև աշխատանքային ժամերին բուժաշխատողների, մանկավարժական համայնքի ներգրավմամբ հանդիպումների կազմակերպումը առավել բնորոշել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Բոլոր կողմերը խուսափել են մեծ հավաքներ կազմակերպելուց: Բավարարվել են փոքր դահլիճային հանդիպումներով, տնտուռն այցերով և մեկ դեպքում՝ երթով:

«Հայ ազգային կոնգրես» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություններն ըստ Եուրոյան քարոզարշավ չեն կազմակերպել: Ավելին՝ դիտորդներին չի հաջողվել ճշտել «Հայ յեղափոխական դաշնակցության» շտաբի հասցեն:

Քվեարկության օրը Ալավերդի համայնքում բազմաթիվ էին կուտակումները, որոնք հիմնականում ձևավորվում էին «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցությունների վստահված անձանց շուրջ, որոշ դեպքերում ոստիկանությունը հրաժարվում էր քայլեր ձեռնարկել կուտակումները վերացնելու ուղղությամբ: Ախթալա բնակավայրում ՏՀՀ նախագահը այնքան հաճախ էր հանում քվեախցիկներից չօգտագործված քվեաթերթիկները, որ փաստացի վերացնում էր քվեարկության գաղտնիության ապահովման համար ստեղծած այդ մեխանիզմը: Միաժամանակ, տեղամասից քվեաթերթիկներ դուրս բերելու դեպք կամ «կառուսել» իրականացնելու այլ նշաններ չեն նկատվել: Մեկ այլ տեղամասում հանձնաժողովի նախագահի սեղանը տեղադրված էր այնպես, որ վտանգում էր քվեախցիկում ընտրողի քվեարկության գաղտնիությունը:

Հարկ է նշել նաև, որ հանձնաժողովները ոչ միշտ էին տիրապետում իրենց գործառնություններին և միայն խախտումների մասին դիտորդներից տեղեկանալուց հետո էին շտկում դրանք:

Ալավերդի համայնքում անցողիկ շեմը հաղթահարել են «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցությունները: Մանդատների բաշխմանը մասնակցել է նաև երրորդ ամենաշատ ձայներ ստացած ուժը՝ «Հայ ազգային կոնգրեսը»: Արդյունքում երկու կուսակցություններն ունեն 13-ական

մանդատ, իսկ «Հայ ազգային կոնգրեսը»՝ 1 մանդատ: Համայնքի ղեկավարը պետք է ընտրվի ավագանու քվեարկության արդյունքում:

Գյուլագարակ

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
3	«ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻ» ԴԱՃԻՆՔ	23	19	0
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	44	2	8
18	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	29	4	7

Գյուլագարակում ընտրապայքարին մասնակցում էին «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցությունները, ինչպես նաև «Հանուն ժողովրդի» դաշինքը:

Այս համայնքում նախընտրական քարոզարշավը բավականին թեժ ընթացավ: Դա վերաբերելի է նախընտրական գործընթացի բոլոր բաղադրիչներին: Այստեղ կիրառվեցին ինչպես ընդունված տեխնոլոգիաներ, այնպես էլ՝ «սև փիամին» բնորոշ գործիքակազմ: Այս գործիքակազմը բնորոշ էր հատկապես «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցություններին: Երկու կողմերը կիրառում էին իրենց բոլոր հնարավոր գործիքները: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պարագայում՝ վարչական ռեսուրս, տեղային հնարավորություններ, անգամ աշխատանքից ազատման սպառնալիք: Իսկ «Ապրելու երկիրը» քարոզչությունը կառուցում էր այդ դեպքերի ակտիվ լուսաբանման և «Քաղաքացիական պայմանագիր» նկատմամբ հակաքարոզչության վրա:

Այս ընտրություններին գրանցված ամենաարտառնոց դեպքը թերևս Գյուլագարակ համայնքում «Հանուն ժողովրդի» դաշինքի գրանցման անվավեր դառնալն էր: Քարոզարշավի մեկնարկից սկսած՝ դաշինքը խուսափում էր, թե դիտորդական առաքելության հետ շփումներից, թե քարոզչությունից: Ինքնաբացարկի համար օրենքով սահմանված ժամկետում, սակայն, շատ կասկածելի հանգամանքներում ինքնաբացարկի դիմումներ ներկայացրին դաշինքի 23 թեկնածուներից 19-ը: Թեև ընտրական ցուցակի առաջին համարն ինքնաբացարկ չէր հայտնել, սակայն ընտրական ցուցակն այլևս չէր համապատասխանում օրենսդրության պահանջներին, և «Հանուն ժողովրդի» դաշինքի գրանցումն անվավեր ճանաչվեց: Ուշագրավ է, որ այս դաշինքի թեկնածուների նկատմամբ ճնշումների վերաբերյալ դիտորդական առաքելության ունեցած տեղեկությունները որևէ կերպ չեն արժարժվել կամ բարձրաձայնվել մրցակից մյուս ուժերի կողմից:

Գյուլագարակ համայնքում նույնպես քվեարկության օրը նկատվել է հանձնաժողովի անդամների՝ իրենց գործառնությունների թերի իմացություն, ինչի արդյունքում տեղամասերում նկատվում էին կուտակումներ, ինչպես նաև վիճաբանություն ընտրողների և հանձնաժողովի նախագահի միջև:

Գյուլագարակ և Կուրթան բնակավայրերում վստահված անձանց կողմից եղել են ուղղորդման նշաններ, ինչպես և ուղղորդումների մասին փոխադարձ մեղադրանքներ՝ մրցակցող կուսակցությունների կողմից:

Գյուլագարակ համայնքում «Հանուն ժողովրդի» դաշինքի թեկնածուների ինքնաբացարկի արդյունքում դաշինքի գրանցումն անվավեր է ճանաչվել: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 8 մանդատ, ինչի արդյունքում վերընտրվել է իր ցուցակը գլխավորած գործող համայնքապետ՝ Խաչիկ Վարդանյանը: «Ապրելու երկիր» կուսակցությունը ստացել է 7 մանդատ:

Լոռի Բերդ

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	25	0	9
18	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23	0	4
23	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14	0	2

Լոռի Բերդ խոշորացված համայնքում ընտրապայքարի մեջ մտան «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն» և «Ապրելու երկիր» կուսակցությունները:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորում էր գործող համայնքապետը, իսկ ցուցակում ներառված էին հիմնականում դպրոցների, ՀՈԱԿ-ների և համայնքային աշխատողներ: Իսկ «Ապրելու երկիր» ավելի շատ տեղ էր հատկացրել գյուղատնտեսներին և շինարարներին: Հատկանշական է, որ «Ապրելու երկիր» կուսակցության ցուցակը առաջնորդող Կարլեն Վերմիշյանը այդ կուսակցությամբ առաջադրվելու որոշման մասին հայտարարելուց հետո հանվել է Ազարակ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնից՝ «Քաղաքացիական պայմանագիր» ցուցակը գլխավորած համայնքի ղեկավարի որոշմամբ:

Այս համայնքում առավել հրապարակային քարոզարշավով աչքի ընկավ «Ապրելու երկիր» կուսակցությունը: «Քաղաքացիական պայմանագիր» քարոզարշավը բավականին ծպտյալ էր ու թափանցիկ բնույթ չէր կրում, իսկ «Հանրապետություն» կուսակցությունը բավարարվեց մի քանի պաստառով, սոցցանցերում քարոզչությամբ և սակավաթիվ հանդիպումներով: Ըստ էության, կուսակցությունը մրցում էր ոչ թե հաղթանակի, այլ մանդատների բաշխմանը երաշխավորված մասնակցության և հնարավորության դեպքում՝ ավագանու կողմից համայնքի ղեկավարի քվեարկության վրա ազդելու համար: Արտառոց դեպքեր Լոռի Բերդում չեն գրանցվել:

Քվեարկության օրը Լոռի բերդ համայնքում ուշադրություն գրավեցին Սվերդլով և Յաղդան բնակավայրերը, որոնցից առաջինում դիտորդները ականատես եղան կազմակերպված խմբով բազմաթիվ ընտրողների տեղամաս ներկայանալուն, իսկ մյուսում հանձնաժողովի նախագահի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձի միջև քվեարկության ներկայացած ընտրողների վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելուն: Որոշ տեղամասերի հանձնաժողովի անդամները պատշաճ չէին գրանցել այլ անձի քվեարկությանը օգնողների տվյալները և փորձում էին թույլ չտալ դիտորդներին քաղվածք կատարել օգնողների էջից:

Լոռի Բերդ համայնքում «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 9 մանդատ և ցուցակը գլխավորած՝ 1996 թվականից Կողեսի գյուղապետ, իսկ 2017 թվականից՝ միավորված Լոռի Բերդ համայնքի համայնքապետ հանդիսացած Արայիկ Ներսիսյանը վերընտրվել է պաշտոնում: «Ապրելու երկիրը» ստացել է 4 մանդատ, իսկ «Հանրապետություն» կուսակցությունը 2 մանդատ:

Տաշիր

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	55	0	6
19	«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	63	1	15

Տաշիր համայնքում առաջադրվել էին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Միասնական համայնք» դաշինքը: Երկու կողմերն էլ այս համայնքում բավականին ակտիվ են եղել քարոզարշավի ընթացքում: Միաժամանակ երկուսն էլ իրենց հնարավորությունների սահմաններում փորձել են խաթարել մրցակից կողմից իրականացվող քարոզարշավը (դահլիճներ չտրամադրել, ընտրողաբար պաստառների թույլատրելի վայրեր սահմանել և այլն):

«Միասնական համայնք» դաշինքի թեկնածու Էդգար Արշակյանին աջակցել են (զոնե թեկնածուի պնդմամբ) ծագումով տաշիրցի հայտնի գործարար Կարապետյան եղբայրները: Կարապետյանների անձնական գործոնը և ազդեցությունը համայնքում տեղի ունեցող ընտրությունների վրա էական է եղել, թե՛ հեղափոխությունից առաջ, թե՛ հետո:

Կողմերի միջև տեղի ունեցած բախումները դուրս չեն եկել առցանց տիրույթից: Միաժամանակ հարկ է նշել, որ դիտորդական առաքելության երկարաժամկետ դիտարկման ընթացքում, առաքելության դիտորդի նկատմամբ ոչ համագործակցային են տրամադրված եղել «Միասնական համայնք» դաշինքը ներկայացնող անձինք:

Տաշիր համայնքում քվեարկության ընթացքը, նույնպես զուգորդվելով կուտակումներով և վստահված անձանց չվերահսկվող ներկայությամբ, առանձնանում էր նաև «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից նշանակված հանձնաժողովի անդամների հանդեպ բացասական տրամադրվածությամբ: Միաժամանակ, «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքների կողմից նշանակված որոշ հանձնաժողովականներ ներկայանալիս նշում էին, որ նշանակված են հենց ընտրություններին մասնակցող «Միասնական համայնք» դաշինքի կողմից: Գյուղական բնակավայրերից որոշներում, բայցև Տաշիր քաղաքում, նկատելի է եղել քվեարկության գաղտնիության հանդեպ արհամարհական տրամադրվածություն, բաց քվեարկության և միաժամանակյա քվեարկության դեպքեր:

Տաշիր համայնքում համայնքի ղեկավարի գլխավորած «Միասնական համայնք» դաշինքը ստացել է 15 մանդատ, և համայնքի ղեկավար Էդգար Արշակյանը վերընտրվել է պաշտոնում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 6 մանդատ:

Կոտայք

Ակունք

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45	0	8
15	«ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	30	0	7

Ակունք համայնքում տեղային քաղաքական գերակայություն ստանալու համար պայքարում էին երկու ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Համախմբում» դաշինքը: «Համախմբում» դաշինքի փաստացի առանցքային ուժը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն էր, իսկ թեկնածուն 2առ բնակավայրի վարչական ղեկավար (նախկին գյուղապետ) Լևոն Խաչատրյանը: Բավականին ընդգրկուն կուսակցական կենսագրություն ունի Ակունք համայնքի ղեկավար և «Քաղաքացիական պայմանագիր» ցուցակը գլխավորող Հունան Ռուբենյանը: Ժամանակին նա հանդիսացել է «Հայաստանի հանրապետական» կուսակցության անդամ, ապա նախապատվություն է տվել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, իսկ վերջում արդեն բացառել է «իզմերը»՝ «Քաղաքացիական պայմանագրին» միանալով:

Ակունք համայնքում, չնայած ինտենսիվ մեկնարկին, առաջադրված ուժերը մեծամասամբ այդպես էլ չիրականացրին համակարգված քարոզարշավ: Ըստ էության՝ առավել ծավալուն քարոզչություն է իրականացրել «Համախմբում» դաշինքը, որը դեռևս մեկնարկի ժամանակ իրականացրել էր դահլիճային հանդիպումներ՝ քրեական ենթամշակույթի կրող ընկալվող անձանց հետ:

«Քաղաքացիական պայմանագիրը» պասիվ էր ոչ միայն ընտրողների հետ հանդիպումների մասով, այլ նաև քարոզչական պաստառներ փակցնելու և քարոզչական նյութեր բաժանելու բաղադրիչներով: Ի հակառակ «Քաղաքացիական պայմանագրի»՝ «Համախմբում» դաշինքն ակտիվ էր քարոզչական պաստառների և ընտրողների հետ հանդիպումների մասով: Առաքելությանը չի հաջողվել դիտարկել «Քաղաքացիական պայմանագրի» կողմից կազմակերպված որևէ նախընտրական հանդիպում կամ հավաք:

Չնայած լարվածության զգացողությանը և 2առ համայնքում դիտորդի հետ համագործակցության մերժմանը, ագրեսիվ և կասկածամիտ պահվածքին, անձնական տվյալներ ճշտելու փորձերին՝ երկու ուժերի միջև արտառոց դեպքեր չեն գրանցվել: Ստացվել է միայն մեկ ահազանգ Կապուտան գյուղից:³

Քվեարկության օրը Ակունք համայնքի տեղամասերի շրջակայքում դիտորդները հաճախ են հանդիպել կուտակումների, նաև արձանագրվել են ընտրողների և վստահված անձանց մասնակցությամբ վիճաբանության դեպքեր՝ մասնավորապես Կոտայք և Նոր գյուղ բնակավայրերում: Հարկ է նշել, որ երկու առաջադրված ուժերն էլ, ի հեճուկս օրենսդրության սահմանափակման, ձգտում էին ունենալ տեղամասում երկուական վստահված անձ, իսկ դիտորդների կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո քվեարկության սենյակից հեռացող վստահված անձինք շարունակում էին մնալ տեղամասի շրջակայքում:

Ակունք համայնքում առաջադրված «Քաղաքացիական պայմանագրին» բաժին է հասել 8 մանդատ, իսկ «Համախմբում դաշինքին» 7 մանդատ: Արդյունքում «Քաղաքացիական պայմանագրի» ցուցակը գլխավորող՝ 1996 թվականից այդ պաշտոնը զբաղեցնող Հունան Ռուբենյանը վերընտրվել է իր պաշտոնում:

³ Տեղի «Քաղաքացիական պայմանագրի» շտաբի բացումը նշանավորվել է ավանդական խորովածով, խմիչքով և փոխադարձ հաճոյախոսություններով: Որպես ավանդույթի անբակտելի մաս, վերջում տեղի է ունեցել ծեծկռտուք Նույն քաղաքական ուժի կողմնակիցների միջև: Համոզված ենք, որ դա չի կրել քաղաքական բովանդակություն, այլ զուտ կազմակերպվել է ավանդույթը չխախտելու ազնիվ նկատառումով:

Բյուրեղավան

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
1	«ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	45	0	7
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45	0	4
14	«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21	0	4
24	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	9	0	0

Բյուրեղավան խոշորացված համայնքում քարոզարշավը թեժ էր: Այստեղ պայքարում էին «Քաղաքացիական պայմանագիր», «Արդար Հայաստան», «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները և «Միասնություն» դաշինքը, որի առանցքում ԲՀԿ կուսակցությունն էր:

Բոլոր ուժերի առաջին համարները համայնքում բավականին ճանաչված անձինք էին:

Այս համայնքում քարոզարշավի հենց մեկնարկին ուշադրության կենտրոնում հայտնվեց «Արդար Հայաստան» կուսակցությունը: Ըստ ստացված տեղեկությունների՝ կուսակցության առաջին համարի կնոջը, որը մանկապարտեզի ղեկավար է, առաջարկել էին ներառվել «Միասնություն» դաշինքի ընտրական ցուցակում: Մերժում ստանալուց հետո տեղային իշխանությունը կիրառել է վարչական լծակները և նկատողություն հայտարարել մանկապարտեզի ղեկավարին: Ավելին՝ մանկապարտեզում սկսվել են ստուգումներ:

«Քաղաքացիական պայմանագիր», «Արդար Հայաստան» կուսակցությունները և «Միասնություն» դաշինքը շատ ակտիվ էին ինչպես քարոզարշավի, այնպես էլ խոստումներ շռայլելու մասով: Այս քաղաքական ուժերն օգտագործում էին թե ընտրողների հետ հանդիպումները, թե սոցկայքային հարթակները: Ի տարբերություն այս ուժերի՝ բացարձակ պասիվ էր «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը: «Հայ յեղափոխական դաշնակցության» թեկնածուները տարբեր միջոցներով հայտարարում էին, որ քարոզարշավի կարիք չունեն:

Սեպտեմբերի 24-ին՝ լռության օրը, սոցիալական ցանցերում «Քաղաքացիական պայմանագիր» և «Արդար Հայաստան» կուսակցությունների հետ փոխկապակցված էջերով տարածվել էր տեղեկատվություն, համաձայն որի՝ «Միասնություն» դաշինքի կողմից Հայկական Կարմիր խաչի ընկերության գրասենյակի միջոցով նյութական աջակցություն էր տրամադրվում՝ դաշինքի օգտին քվեարկելու պայմանով: Դիտորդի տեղեկատվությամբ, ինչպես նաև ելնելով օրվա ընթացքում գրասենյակ ժամանած ոստիկանության՝ դեպքին ընթացք չտալու փաստից՝ հրապարակումները ապատեղակատվական էին:

Բյուրեղավան համայնքում քվեարկության ընթացքում շատ էին ընթացակարգային մանր խախտումները և ընդհանուր առմամբ նկատելի էր հանձնաժողովների վատ պատրաստվածությունը: Դիտորդների գնահատմամբ անիրազեկության արտահայտում էր օրինակ մեկ տեղամասային կենտրոնում քվեախցիկների այնպիսի տեղակայումը, որ դեպի սանհանգույց տանող ճանապարհը անցնի դրանց հետևով: Ցածր էր նաև ընտրողների տեղեկացվածությունը, ինչի հետևանքով «օգնության էին հասնում» տեղամասերում ներկա վստահված անձինք:

Բյուրեղավանում անցողիկ շեմը հաղթահարել է համայնքի ղեկավարի գլխավորած «Միասնություն» դաշինքը (7 մանդատ), «Քաղաքացիական պայմանագիրը» (4 մանդատ) և «Արդար Հայաստանը» (4 մանդատ): Համայնքապետը կորոշվի ավագանու քվեարկությամբ:

Չարենցավան

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	81	0	11
16	«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	51	0	14
18	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26	0	2

Չարենցավանում առաջադրվել էին երեք քաղաքական ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր» կուսակցությունները և «Միասնական համայնք» դաշինքը: Ի սկզբանե պարզ էր, որ հիմնական պայքարն ընթանալու է «Քաղաքացիական պայմանագիր» և գործող համայնքապետի գլխավորած «Միասնական համայնք» ուժերի միջև:

«Ապրելու երկիր» կուսակցության առաջին համարը մինչև առաջադրումը բանակցում էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորելու մասին:

Քարոզարշավն ակտիվ մեկնարկել էին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Միասնական համայնքը»: Այս երկու ուժերը սկզբնական փուլում կազմակերպել էին դասական քարոզարշավ՝ ժանրի կանոններով: «Միասնական համայնք» դաշինքի առաջին համարը, որ համայնքը ղեկավարում էր 2017 թվականից, փաստացի կարողացավ օգտագործել համայնքային (վարչական) ռեսուրսները: Նախ, մինչ բուն քարոզարշավը՝ սկսվեցին ասֆալտապատման աշխատանքներ, ապա մի շարք բնակավայրերում ընթացք տրվեց խմելու ջրի մատակարարման լուծման հարցին:

Չնայած նախնական դիտարկումներին, որ այս համայնքում հնարավոր է լարում քարոզարշավի ընթացքում, այն անցավ բավականին հանգիստ: Անվտանգային իրավիճակով պայմանավորված՝ կողմերը դադարեցրին քարոզարշավը: Վերսկսեցին միայն սեպտեմբերի 19-ից, սակայն ոչ այն ծավալով, ինչ մեկնարկում:

Չարենցավան համայնքի գրեթե բոլոր տեղամասերում թե «Միասնական համայնք» դաշինքի, թե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձինք ներկա էին գտնվում երկուսով՝ հաճախ չգրանցվելով գրանցամատյանում: Դիտորդների կողմից խնդիրը արձանագրելու և հանձնաժողովների նախագահներին՝ այն շտկել հորդորելու արդյունքում «հավելյալ» վստահված անձինք շարունակում էին մնալ տեղամասային կենտրոնին հարող տարածքում, 50 մ շառավղից դուրս: Չնայած որ կուտակումները այդքան էլ տարածված չէին, եղածները գոյանում էին վերոնշյալ նույն ուժերի շտաբների շուրջ, թեկնածուների մասնակցությամբ՝ շառավղից դուրս, սակայն տեղամասային կենտրոնների անմիջական հարևանությամբ: Արձանագրվել է վստահված անձանց միջև վիճաբանության մեկ դեպք:

Ըստ ելության, դիտորդների գնահատմամբ, քվեարկության ողջ օրվա ընթացքում հակառակորդ ուժերը վերահսկում էին «իրենց ընտրողների» մասնակցությունը:

Չարենցավան համայնքում գործող համայնքի ղեկավարի գլխավորած Միասնական համայնք դաշինքը ստացել է 14 մանդատ, ինչի արդյունքում համայնքապետ Հակոբ Ծահգալոյանը վերընտրվել է պաշտոնում: «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 11 մանդատ, իսկ «Ապրելու երկիրը»՝ 2 մանդատ:

Ջրվեժ

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45	0	15

Ինչպես ճամբարակ համայնքում, այնպես էլ Ջրվեժում առաջադրվել էր մեկ քաղաքական ուժ, այս դեպքում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ գործող համայնքապետի գլխավորությամբ: Քարոզարշավի ընթացքում արտառոց ոչինչ տեղի չի ունեցել: Թերևս մեկ ուժի առաջադրումն էր նաև պատճառը, որ այստեղ գրանցվեց այս ընտրություններին ամենացածր մասնակցությունը:

Ջրվեժ համայնքում ընտրությունները անցել են պասիվ, ինչպես ընտրողների մասնակցության, այնպես էլ հանձնաժողովի անդամների և վստահված անձանց առումով: Այնուամենայնիվ, թեկուզ և ավելի հազվադեպ, դիտարկվել են թե կուտակումներ, թե ընտրողների տեղափոխության դեպքեր:

Ջրվեժ համայնքում առաջադրված Քաղաքացիական պայմանագիրն ընտրվել է 95.77 % աջակցությամբ: 1991 թվականից համայնքը ղեկավարող Ռոբերտ Պետրոսյանը վերընտրվել է պաշտոնում:

Ծիրակ

Անի

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
6	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՁԱՆՔ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23	0	3
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	63	0	8
11	«ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	61	0	10

Անի խոշորացված համայնքում ընտրապայքարի մեջ էին մտել երեք քաղաքական ուժեր: «Ազգ-համայնք» դաշինքը ղեկավարում էր Մարալիկի երկարամյա քաղաքապետ, «Հայաստանի հանրապետական» կուսակցության ներկայացուցիչ Արտակ Գևորգյանը, որի վերաբերյալ 2020թ. կայացվել է մեղադրական դատավճիռ,⁴ իսկ հետագայում եղել են հրաժարականի պահանջով ցույցեր:⁵ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջին համարն Արման Սարիբեկյանն էր, որը «Հայփոստի» մի շարք շրջանային ուղղությունների պատասխանատուն է: «Հայկական երազանք» համեմատաբար նորաստեղծ կուսակցության ցուցակը գլխավորում էր Ազուն Սաղաթելյանը: Հատկանշական է այն հանգամանքը, որ «Ազգ-համայնք» դաշինքի ցուցակում ներառված էին ՊՈԱԿ-ների, ՀՈԱԿ-ների, Անիի համայնքապետարանի աշխատակիցներ և մի շարք վարչական շրջանների ղեկավարներ:

Առավել ակտիվ քարոզարշավ են իրականացրել «Ազգ-համայնք» դաշինքը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: «Հայկական երազանք» կուսակցությունն աշխատել է գաղտնի պահել ընտրողների հետ հանդիպումները: Ստացվել է մեկ ահազանգ՝ քաղաքական հայացքների պատճառով «Հայփոստի» աշխատակցուհուն աշխատանքից հեռացնելու մասին:

Փոքրիկ միջադեպեր են գրանցվել Ծիրակի մարզպետի մասնակցությամբ՝ ընտրողների հետ հանդիպումների ընթացքում: Ծիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը բավականին ակտիվ ներգրավված էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության աշխատանքներում: Ինչպես մյուս համայնքներում, այստեղ ևս սեփական դիտանկյունից են ներկայացվել սուբվենցիոն ծրագրերը: Չնայած երկու առաջատար ուժերի փոխադարձ մեղադրանքներին՝ քարոզարշավն անցել է բավականին հանգիստ մթնոլորտում:

Քվեարկության օրը Անի համայնքում նկատվել են բազմաթիվ դեպքեր, երբ միևնույն կուսակցության 2 վստահված անձինք ոչ միայն ներկա էին տեղամասում, այլև իրենց վրա էին վերցնում ընտրողներին քվեարկության կարգը բացատրելու գործառնությունը, ինչը կարող էր ուղղորդող ազդեցություն ունենալ ընտրողների վրա: Առավել ևս ուղղորդող ազդեցությունը նկատելի էր Մարալիկ քաղաքի 33/3 տեղամասում, որտեղ, վստահված անձանց ներկայությունից բացի, ընտրողների կուտակմանը զուգընթաց տեղամասային կենտրոնի տարածքում էր նաև «Քաղաքացիական պայմանագիր» ավագանու թեկնածու Անանիկ Ուռույմյանը:

Հատկանշական է որոշ տեղամասերում հանձնաժողովի կողմից դիտորդների հանդեպ ոչ համագործակցային վերաբերմունքը, որն արտահայտվում էր «ԿԳԲ-ից եկան, եկան գրեն» արտահայտություններով և նյութերին ծանոթանալու իրավունքը սահմանափակելու փորձերով, ինչը մեղմվում էր միայն դիտորդների կողմից գրանցամատյանում իրենց գնահատականը գրի առնելու մասին նախազգուշացման արդյունքում:

⁴ «Անի համայնքի ղեկավարն ազատազրկման չի դատապարտվի, նա համաներմամբ ազատ է արձակվել».
Փաստաբան, <https://www.aravot.am/2020/07/28/1126148/>

⁵ Մարալիկում կրքերը նորից թեժանում են. պահանջում են համայնքապետի հրաժարականը,
<https://www.aravot.am/2021/06/30/1201794/>

Աչքի ընկնող էր առանձին բնակավայրերում ժամը 18:00-ից հետո ընտրողների հոսքի կտրուկ ավելացումը, որը գուցորդվում էր նաև ավելի շատ «ուղեկցվող» ընտրողների ներկայությամբ և քվեարկությանը օգնելու դեպքերով:

Անի համայնքում 21 մանդատից 10-ը բաժին է հասել համայնքի գործող ղեկավարի գլխավորած «Ազգ-համայնք» դաշինքին: Երկրորդ տեղում 8 մանդատով «Քաղաքացիական պայմանագիր» է, երրորդ տեղում 3 մանդատով «Հայկական երազանքը»: Համայնքի ղեկավարը կընտրվի ավագանու կողմից:

Սյունիք

Սիսիան

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
5	«ՄԵԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	40	1	2
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	63	0	8
13	«ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	63	1	5
17	«ԶԱՐԳԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	29	2	0
18	«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	43	0	4
21	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	38	5	2
24	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26	1	0

Նախնական դիտարկումներից ակնհայտ էր՝ Սիսիան համայնքի այս ընտրություններն ամենամրցակցայինն էին լինելու: Ընտրապայքարի մեջ էին մտել «Մեկ Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու Երկիր», «Հայ յեղափոխական Դաշնակցություն», «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցությունները և «Աշխատանք և արդարություն», «Զարգացող Համայնք» դաշինքները:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը աջակցող առանձին խմբեր հավակնում էին համայնքի ղեկավարի թեկնածությանը, ինչի արդյունքում կուսակցության աջակիցներից ոմանք առաջադրվել էին «Հանուն Հանրապետության» կուսակցության ցուցակով:

«Մեկ Հայաստան», «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները և «Զարգացող համայնք» դաշինքը բավականին պասիվ են եղել ողջ քարոզարշավի ընթացքում: Ավելի շեշտված քարոզարշավ են իրականացրել «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու Երկիր» կուսակցությունները և «Աշխատանք և Արդարություն» դաշինքը: Պայքարի մեջ մտած ուժերը օգտվել են ոչ միայն տեղական մամուլի և հեռուստաընկերության հնարավորություններից, այլ նաև համապետական նշանակության կայքերի և հեռուստաընկերությունների հնարավորություններից:

Սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական ագրեսիայի արդյունքում Սիսիան համայնքն ուղղակիորեն է թիրախավորվել, ինչը հարցեր էր առաջացնում ընտրությունների չեղարկման մասին, և առավել Էական ազդեցություն ունեցավ քարոզարշավի հետագա ընթացքի վրա: Քարոզարշավի պայմանական երկրորդ փուլում՝ ռազմական իրադարձություններից հետո, առաջադրված ուժերը նախընտրում էին ընտրողների հետ շփվել հիմնականում կարճ տեսահոլովակների միջոցով: Չնայած մինչև քարոզարշավային փուլը բավականին շիկացած մթնոլորտին՝ քարոզարշավն անցել է առանց լուրջ միջադեպերի:

Սիսիան համայնքում քվեարկության օրվա ընթացքում, չնայած անվտանգային իրավիճակի հետ կապված մտավախություններին, դիտարկվել են նույն երևույթները, որոնք բնորոշել էին ընտրությունները մյուս համայնքներում՝ որոշները՝ ավելի արտահայտված: Համայնքի կազմում ներառված բազմաթիվ փոքր բնակավայրերի տեղամասերի մոտակայքում, որպես կանոն, նկատելի էին փոքր խմբերի կուտակումներ (համեմատաբար մեծերում՝ համեմատաբար մեծ կուտակումներ), ոչ միշտ՝ 50 մ շառավղի մեջ, սակայն միշտ դեպի տեղամասային կենտրոն տանող ճանապարհներին՝ այն կուսակցությունների վստահված անձանց և թեկնածուների մասնակցությամբ, որոնք ունեին տվյալ բնակավայրում հստակ ընտրազանգված՝ հիմնականում հիմնված բարեկամական կապերի վրա: Առանձին բնակավայրերում նկատելի էր նաև ընտրողների կազմակերպված տեղափոխությունը: Կանխատեսելիորեն այդ տեսանկյունից առավել նկատելի էին «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու Երկիր» կուսակցությունների և «Աշխատանք և արդարություն» դաշինքի ներկայացուցիչները: Վերջինիս

վստահված անձանցից մեկի ներկայությունը հարևան մի քանի բնակավայրերում նախորդել է ընտրողների՝ քվեարկությանը խմբերով ներկայանալու և ՏԿ-ի մոտ կուտակումների գոյացմանը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձանց ակտիվությանը գումարվում էր նաև բնակավայրերի վարչական ղեկավարների կողմից հանձնաժողովների չեզոքությունը խարխիղ ներազդեցությունը: Սիսիան քաղաքում բազմաթիվ միջադեպերը տեղի են ունեցել 34/06 տեղամասում. 3 ֆավորիտ ուժերի կողմնակիցների միաժամանակյա կուտակումներ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմնակից մեկ անձի 12-ժամյա ներկայություն, որը հստակ կրում էր ընտրողներին անուղղակի ուղղորդման նշաններ, նույն կուսակցության պատգամավորի տևական ներկայություն, «Քաղաքացիական պայմանագիր» կողմից վստահված անձի միջոցով մատուցվող ծաղիկներ հանձնաժողովի անդամներին (մեկ այլ տեղամասում ևս): Որպես հագեցած օրվա ավարտ այս տեղամասում ձայների հաշվարկի ընթացքում միևնույն վստահված անձի կողմից վնասվել և անվավեր է դարձել մրցակից կուսակցության քվեաթերթիկը:

Բռնակոթ բնակավայրում տեղի էր ունեցել ոչ տևական բախում ընտրողների և վստահված անձանց միջև, որը դադարեցվել է ոստիկանության հատուկ նշանակության վաշտի ծառայողների կողմից: Հարկ է նշել, որ Սիսիանի որոշ տեղամասերում և բնակավայրերում ոստիկանության ուժեղացված ծառայության ազդեցությունը հակասական էր և չնայած չէր կաշկանդում ընտրողներին, նաև չէր օգնում կանխարգելել միջադեպերը:

Սիսիան համայնքում ընտրվել է մասնակցող 7 ուժերից 5-ը: Համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի գլխավորած ընտրական ցուցակով 8 մանդատ է ստացել «Քաղաքացիական պայմանագիրը», «Աշխատանք և արդարություն» դաշինքը ստացել է 5 մանդատ: «Ապրելու երկիր» կուսակցությունը ստացել է 4 մանդատ, իսկ «Մեկ Հայաստան» և «Հանուն հանրապետության» կուսակցությունները ստացել են երկուական մանդատ: Այսպիսով՝ Սիսիան համայնքում համայնքի ղեկավարը կընտրվի ավագանու կողմից:

Քաջարան

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45	0	4
23	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	35	1	2
25	«ԴԵՊԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	45	0	10

Քաջարան համայնքում ընտրապայքարի մեջ էին մտել երեք ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն» կուսակցությունները և «Դեպի Միասնություն» դաշինքը:

Ընտրապայքարի ակնհայտ ֆավորիտը «Դեպի Միասնություն» դաշինքը գլխավորող Մանվել Փարամազյանն էր: Նա հանդիսանում էր համայնքի ղեկավար, իսկ մինչ այս ընտրությունները՝ իրեն տարանջատել էր ավելի համապետական քաղաքական գործընթացներից:

Մասնակից բոլոր քաղաքական ուժերն ունեցել են նախընտրական շտաբներ: Երեք ուժերն էլ իրենց հնարավորությունների չափով ներառվել են նախընտրական քարոզարշավի մեջ: Ունեցել են տեղային նշանակության հնարավորինս խոշոր հավաքներ, ինչպես նաև այցելություններ համայնքում ներառված բնակավայրեր: Նախընտրական քարոզարշավի ընթացքում առաքելության ներկայացուցիչների կողմից արձանագրվել է մասնակի լարվածություն, որը սակայն չի հանգեցրել որևէ անթույլատրելի գործընթացի:

Քաջարան համայնքում քվեարկության ողջ օրվա ընթացքում բազմաթիվ են եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածուների տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու դեպքերը, ընդհուպ մինչև 5-6 հոգանոց խմբով շրջագայելը: Հատկանշական է, որ թեկնածուները պնդում էին, թե դա իրենց իրավունքն է, և ըստ էության՝ փորձում էին իրականացնել վստահված անձանց գործառնություն: Մինևույն ժամանակ «Հանրապետություն» կուսակցության մի վստահված անձը շրջագայում էր Քաջարան քաղաքի տեղամասերով, ներկա էր լինում քվեարկության սենյակում՝ առանց գրանցվելու և ակնհայտ համակարգում էր ընտրողների տեղափոխությունը: Մյուս կողմից, տևական և բազմամարդ կուտակումներ են դիտարկվել մի շարք տեղամասերի շրջակայքում՝ «Դեպի Միասնություն» դաշինքի կողմնակիցների կողմից: Ուշադրություն գրավող էր նաև առանձին տեղամասերում օգնությամբ քվեարկության համեմատաբար բարձր թվերը:

Քաջարանում համայնքի ղեկավարի գլխավորած «Դեպի միասնություն» դաշինքը ստացել է 10 մանդատ և համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը վերընտրվել է: «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 4 մանդատ, իսկ «Հանրապետությունը»՝ 1 մանդատ:

Վայոց Ձոր

Արենի

N	կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28	0	13
23	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	8	1	2

Վայոց Ձորի Արենի խոշորացված համայնքում առաջադրվել էին երկու քաղաքական միավորներ՝ «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունները: «Քաղաքացիական պայմանագիր»՝ կառավարման հարուստ փորձով առաջին համար Հուսիկ Սահակյանին «Հանրապետությունը» հակադրել էր գյուղատնտեսությամբ զբաղվող, այժմ գործազուրկ Անուշավան Ավետիսյանին: Առաջադրված երկու ուժերն էլ ցուցաբերել են բացառիկ համերաշխություն և քարոզարշավ չեն կազմակերպել: Եթե մի քանի վայրերում «Քաղաքացիական պայմանագիր» նախընտրական փոքրիկ պաստառները փակցված չլինեին, ապա ոչինչ չէր հուշի, որ այս համայնքում ընտրություններ են:

Քարոզարշավի առաջին օրվանից մինչև քվեարկության ավարտը «Հանրապետություն» կուսակցության բացարձակ պասիվությունից դատելով՝ դիտորդների տպավորությունն այն էր, որ կուսակցության առաջադրման նպատակն էր ստանալ «Քաղաքացիական պայմանագիր» դեմ քվեները: Ըստ էության՝ սա կարող էր նաև համատեղ մշակված քաղաքական տեխնոլոգիա լինել՝ ապահովագրելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը միայնակ առաջադրվելու դեպքում «Դեմ» քվեների առատությունից կամ հավանական պարտությունից:

Քվեարկության օրը Արենի համայնքում նույնպես արձանագրվել է, որ հանձնաժողովի անդամները ոչ բավարար չափով են տիրապետում իրենց գործառույթներին: Մնացած առումներով հանգիստ և ցածր մասնակցությամբ տեղի ունեցած ընտրությունները աչքի էին ընկնում միայն նրանով, որ տեղամասերից գրեթե ոչ մեկում չէին նկատվել «Հանրապետություն» կուսակցության վստահված անձինք:

Արենի համայնքում «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 13 մանդատ, իսկ մրցակից «Հանրապետություն» կուսակցությունը՝ 2 մանդատ: Այսպիսով համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը վերընտրվել է:

Եղեգիս

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	թեկնածուների թիվը նախնական ցուցակում	ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26	0	9
10	ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18	1	6
26	«ՎԵՐԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	9	2	0

Եղեգիսում ընտրապայքարի մեջ էին մտել երեք ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Ազատական» և «Վերելք» կուսակցությունները: Ըստ շրջանառվող լուրերի՝ այս վերջին կուսակցությունն առաջադրվել էր հավասար հնարավորությունների դեպքում նժարը դեպի «Ազատական» կուսակցության կողմը թեքելու համար:

Այս համայնքում. «Քաղաքացիական պայմանագիր» կողմից մի քանի տնետուն այցից զատ, փաստացի քարոզարշավ չկազմակերպվեց, նախընտրական շտաբներ չբացվեցին: «Քաղաքացիական պայմանագիրը» և «Ազատական» աչքի ընկան միմյանց ուղղված «քոչարյանական» լինելու «մեղադրանքներով», ինչին ավելի մեծ խառնաշփոթ էր ավելացնում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ս. Բագրատյանի կողմից «Ազատական» կուսակցության սատարման փաստը:

Քվեարկության օրը Եղեգիսում լարվածությունը արձանագրվել է մասնավորապես Շատին բնակավայրում, որն արտահայտվել է հանձնաժողովի նախագահի և վստահված անձի, վստահված անձանց և ընտրողների վիճաբանությունների ձևով, ինչպես նաև ուղղորդման փորձերով, ընդ որում՝ նաև քվեարկությանը օգնելու տեսքով: Նույն Շատին բնակավայրում տևական ժամանակ տեղամասից պատշաճ հեռավորության վրա, սակայն դեպի տեղամաս տանող ճանապարհին կուտակում էին ստեղծել «Ազատական» կուսակցության թեկնածու երկու եղբայրները, որոնք իրենց կողմնակիցների հետ հետևում էին ընտրողների ժամանմանը՝ մինչև վստահված անձանց «դիմավորելը»:

Կրկին շատին գյուղում ձայների հաշվարկի ժամանակ արձանագրվել են բազմաթիվ «անկյունը ծալված» «Ազատական» կուսակցության օգտին քվեաթերթիկներ, իսկ ավելի ուշ տեղեկություններ են ձեռք բերվել նույն կուսակցության կողմից վառելիքի լիցքավորման տեսքով ընտրակաշառք բաժանելու մասին, ինչի վերաբերյալ, ըստ ստացված տեղեկությունների, հարուցվել է քրեական գործ:

Եղեգիս համայնքում 9 մանդատ է ստացել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որի ցուցակը գլխավորող համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյանը վերընտրվել է պաշտոնում: «Ազատական» կուսակցությունը ստացել է 6 մանդատ, իսկ անցողիկ շեմը չհաղթահարած «Վերելք» կուսակցությունը թեև մասնակցել է մանդատների բաշխմանը, սակայն չի ունեցել թեկուզ մեկ մանդատի համար բավարար քվե:

Տավուշ

Բերդ

N	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	Թեկնածուների թիվը նախնական ցուցակում	Ինքնաբացարկների թիվը 03.10.2022 դրությամբ	ստացած մանդատների թիվը
4	«ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՍԵՐՈՒՆԴ» ԴԱՇԻՆՔ	27	3	2
7	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	60	2	8
22	«ՉՈՐԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԴԱՇԻՆՔ	63	0	11

Բերդում նախընտրական պայքարը երեք քաղաքական ուժերի միջև էր: «Չորավոր համայնք» դաշինքի ցուցակը գլխավորում էր ներկայիս համայնքապետ Հարություն Մանուչարյանը, որը 2021թ. նոյեմբերից գտնվում էր անազատության մեջ: Նա մեղադրվում է քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) և 314-րդ հոդվածի 1-ին մասի (պաշտոնեական կեղծիքը) հատկանիշներով: Այս հանգամանքի առկայությունը եղել է «Չորավոր համայնք» դաշինքի նախընտրական քարոզարշավի մեխերից մեկը: Դաշինքը քարոզարշավի մի շարք բաղադրիչներ կառուցել է քրեական հետապնդումը քաղաքական հետապնդում ներկայացնելու և անազատության մեջ գտնվող մարդուն օգնելու «աղաթային մտածողությամբ»:

«Չորավոր համայնք» դաշինքի քարոզարշավը հիմնականում կազմակերպել է հիմնական թեկնածուի որդին՝ Անուշավան Մանուչարյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորում էր Վահրամ Սուքիասյանը, որը Միասնական սոցիալական ծառայության պետն է:

«Արժանապատիվ սերունդ» դաշինքը ձևավորվել էր «Արդարություն» և «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների շուրջ: Դիտորդական առաքելությունն ահագանգեր է ստացել «Արժանապատիվ սերունդ» դաշինքի ցուցակը մի մասը պարտադրանքով կազմելու վերաբերյալ: Ուշագրավ է, որ ըստ դիտարկումների՝ դաշինքի թեկնածուների քիչ թե շատ նշանավոր քարոզչական գործունեությունն ասոցացվել է «Չորավոր համայնք» դաշինքի հավաքներին մասնակցությամբ:

Միաժամանակ, սեպտեմբերի 9-ին ինքնաբացարկի մասին հայտարարել է «Արժանապատիվ սերունդ» դաշինքը գլխավորող Աշոտ Մելիքյանը: Ըստ առաքելության ունեցած տեղեկությունների՝ ինքնաբացարկը կապված է եղել հնարավոր հետընտրական զարգացումների հետ, համաձայն որոնց, անհրաժեշտության դեպքում դաշինքը պետք է քվեարկեր «Չորավոր համայնքի» թեկնածուի օգտին:

Թե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, թե «Չորավոր համայնքը» քարոզարշավի ընթացքում կիրառել են ունեցած վարչական ռեսուրսները՝ տարբեր դրսևորումներով: Քարոզչության վերջին օրերին արձանագրվել է լարվածություն, «Չորավոր համայնքի» օգտին «քրեական ենթամշակույթի» ներկայացուցիչների տնայցեր, «Քաղաքացիական պայմանագրի» օգտին բարձրաստիճան պաշտոնյաների ներգրավմամբ մանկավարժների համար իրականացվող կամավոր-պարտադիր մասնակցությամբ միջոցառում:

Բուն քվեարկության ընթացքում Բերդ համայնքում դիտորդները որևէ միջադեպ չեն արձանագրել:

Բերդ համայնքում 8 մանդատ բաժին է հասել «Քաղաքացիական պայմանագրին», և 2-ը՝ «Արժանապատիվ սերունդ» դաշինքին: «Չորավոր համայնք» դաշինքը 11 մանդատ է ստացել, ինչի արդյունքում ցուցակը գլխավորող Բերդ համայնքի ղեկավար, կալանքի տակ գտնվող Հարություն Մանուչարյանը օրենքի ուժով պիտի վերընտրվեր պաշտոնում, եթե չիրաժարվեր: Սեպտեմբերի 30-ին վերոնշյալ քրեական գործի շրջանակներում կալանավորվել է դաշինքի ընտրական ցուցակի 2-րդ համար, համայնքի ղեկավարի տեղակալ և պաշտոնակատար Սամվել Հովսեփյանը: Դատելով Մանուչարյանի և իր թիմակիցների հայտարարություններից՝ ակնհայտ է դառնում, որ նրանք տեղյակ չէին համայնքի ղեկավարի ընտրության կարգավորումներից և վստահ էին, որ անկախ իրենց մանդատների թվից՝ համայնքի ղեկավարը պիտի ընտրվեր ավագանու կողմից: Այս թյուրիմացության արդյունքում Հարություն Մանուչարյանն ինքնաբացարկ է ներկայացրել՝ ձգտելով փոխանցել մանդատը իր թիմի՝ ազատության մեջ գտնվող հաջորդ թեկնածուին: Ինքնաբացարկ են ներկայացրել նաև 2-րդ համար Սարգիս Հովսեփյանը և 10-րդ համարի

Թեկնածու Սարգիս Մարգարյանը: Ինքնաբացարկի մասին հայտարարելու նույն օրը փոխվել է Մանուչարյանի խափանման միջոցը և նա գրավով ազատ է արձակվել: Այս հանգամանքներում ակնհայտ է, որ կալանավորումը և ազատ արձակումն ուղղակի առնչություն ունենին ընտրական գործընթացներին և քաղաքական հետապնդման տարրեր են պարունակում: «Անկախ դիտորդը» կշարունակի հետևել քրեական գործի ընթացքին, ինչպես նաև կդիտարկի ավագանու նիստը, որի ընթացքում ավագանին կընտրի համայնքի նոր ղեկավարին:

Վերջաբան

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների երկարամյա դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք գրեթե երբեք չեն լինում միաժամանակ ազատ, արդար և մրցակցային՝ տարբեր ընտրությունների ժամանակ ու տարբեր համայնքներում բացակայում է այս բաղադրիչներից առնվազն մեկը:

Համայնքների մեծ մասում ֆորմալ առումով համամասնական համակարգի պայմաններում ակնհայտ է մեծամասնական, անձնավորված ընտրությունների տրամաբանության պահպանումը, որի առանցքում գործող համայնքապետների վերընտրությունն է՝ անկախ առաջադրող քաղաքական ուժից:

Այս փաստն արժեգրկում է կուսակցությունների և բազմակուսակցական համակարգի կայացմանն ու զարգացմանը ուղղված քայլերը: Կուսակցությունների մեծ մասը ծառայում է որպես անհատ թեկնածուի պատեհապաշտական հարթակ՝ չձգտելով ստորին մակարդակում իրապես քաղաքական թիմ ձևավորել կամ օգտագործել ընտրությունները՝ որպես հանրային քաղաքականության ձևավորմանը մասնակցելու հայտ:

Պաշտոնեական դիրքը չարաշահելու և յուրացումների դեպքերի հիմնավորվածությամբ հանդերձ խիստ մտահոգիչ է արդարադատության կամայական կիրառումը առանձին համայնքների ղեկավարների նկատմամբ, որում ակնհայտ և անհերքելի է քրեական հետապնդման քաղաքական ենթատեքստը և ընթացքը:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինք, ի դեմս՝

- ~ Հելսինկյան բաղադրացիական տասնբլեայի Վանաձորի գրասենյակ
- ~ «Իրազեկ բաղադրացիների միավորում»
- ~ «Ուղղակի ժողովրդավարություն»
- ~ «Գյումրու առաջընթաց»
- ~ «Ռեսուրս Գյումրի» /Գյումրու «Ռեսուրս» նախաձեռնությունների կենտրոն ՔՀԶ ՀԿ
- ~ Կանանց իրավունքների տուն
- ~ Մարզու իրավունքների եզդիական կենտրոն

Դիտորդական առաքելությունն իրականացվում է Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի և Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի ֆինանսավորմամբ «Անկախ դիտորդ - տեղական ընտրություններ 2022» ծրագրի շրջանակներում:

Այս հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ֆինանսավորող կազմակերպության տեսակետները: